ՀՏԴ 329.73 (479.25) *Պատմություն*

Ս. ՍԱՊԱՀ-ԳՅՈՒԼՅԱՆԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԵՈՆԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ

Ս.Պողոսյան

Առաջին աշխարհամարտի տարիներին հայ ժողովուրդը հանդես է եկել որպես պատերազմող կողմ: Բացի Անտանտի երկրների բանակներ զորակոչված հարյուրհազարավոր հայերից, կազմավորվեցին նաև ազգային կամավորական զորամասեր: Կովկասում կամավորական գնդերը մարտնչեցին ռուսական բանակի կողքին, իսկ հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, երբ ռուսական զորքերը հեռացան տարածաշրջանից, հայկական ուժերը 1918 թ. հունվարից մինչև սեպտեմբեր միայնակ պայքարեցին թուրքական բանակի դեմ: 1916 թ. վերջին Ֆրանսիայի նախաձեռնությամբ Կիպրոսում կազմավորվեց Հայկական լեգեոնը, որի խնդիրն էր ազատագրել Կիլիկիան: Այն ֆրանս-բրիտանական զորքերի հետ մասնակցեց Պաղեստինի, Լիբանանի, Սիրիայի ազատագրմանը: Լեգեոնի պաշտպանության տակ Կիլիկիա վերադարձան Մեծ եղեռնից փրկված մոտ 150.000 հայեր:

Հայկական լեգեոնը կազմավորելու գործում նշանակալի դեր ունեցավ Ստեփան Սապահ-Գյուլյանը (Ստեփանոս Տեր-Դանիելյան, 1861-1928 թթ.): Նա Ս. Դ. Հնչակյան կուսակցության ամենանշանավոր գործիչներից էր՝ տեսաբան, խմբագիր, կազմակերպական մեծ ունակություններով օժտված անձ: Հրատարակել է մի շարք աշխատություններ, խմբագրել «Հնչակ», «Երիտասարդ Հայաստան» և այլ թերթեր: Նա խոշոր դերակատարություն է ունեցել Եգիպտոսի ու ԱՄՆ-ի հայկական համայնքների հասարակական-քաղաքական, կրոնական կառույցների միջև համագործակցություն հաստատելու և կամավորագրությունը կազմակերպելու գործում:

Ուսումնասիրության մեջ փորձել ենք վերլուծել ու լուսաբանել Առաջին աշխարհամարտի տարիներին այդ գործչի տեսակետները մեր ժողովրդի փրկության, կամավորական շարժման, Հայաստանի ապագայի մասին, ներկայացրել ենք այդ նպատակներին հասնելու ճանապարհին նրա գործադրած ջանքերը, հատկապես՝ Հայկական լեգեոնը կազմավորելու գործում նրա ներդրմանը:

Ս. Սապահ-Գյուլյանը Առաջին համաշխարհային պատերազմի սկզբից բարձրացրեց գլխավոր նպատակների՝ հայության փրկության և Հայաստանի ապագայի համար բոլոր ուժերը համախմբելու, համերաշխ գործելու անհրաժեշտությունը: Նա պատերազմի առաջին տարիներին հրատարակեց մի քանի աշխատություններ, ուր բարձրացնում էր հայկական բոլոր հոսանքների ու կուսակցությունների սերտ համագործակցության գաղափարը և ակտիվորեն մասնակցեց այդ նպատակին ուղղված բոլոր ջանքերին:

Հնչակյանները հայ քաղաքական ուժերից առաջինն էին, որ բարձրացրին Հայաստանի միավորման ու անկախության անհրաժեշտությունը: Առաջին աշխարհամարտի հենց սկզբից նրանք կրկին

բարձրացրին այդ գաղափարը, որի իրագործման համար անհրաժեշտ էին համարում, որ հայերը հանդես գան որպես պատերազմող կողմ: Ս. Սապահ-Գյուլյանը, որպես ՍԴՀԿ գլխավոր տեսաբան, 1915 թ. Կահիրեում հրատարակեց «Ինքնավար Հայաստան» աշխատությունը, ուր զարգացնում էր այդ գաղափարները, ինչպես նաև ստեղծված պայմաններում հայկական բոլոր ուժերի համագործակցության անհրաժեշտությունը: «Արդէն եղած, գոյութիւն ունեցած Հաստատութիւնները, կապերը պէտք է ամրապնդել, չեղածները ստեղծել, պակասը լրացնել, որպէս զի Հայ Ազգը խօսի, ցանկանայ, գործէ որպէս մի ամբողջութիւն: Բոլոր Հայերը, առանց կրօնքի և դաւանանքի խտրութեան, գտնուում են միատեսակ պարտականութեան, միանման հզոր իրաւունքի առաջ: Պատմութիւնը նրանց ամէնքին էլ բերել, սեղմել է մի ընդհանուր հարցի առաջ: Հրապարակ դրուած խնդիրը ամբողջութեան է պատկանում և ո՛չ թէ մէկ մասին. նա բոլորի սեպհականութիւնն է, առանց աշխարհագրական լայնութեան և դասակարգային տարբերութեան: Դա Հայ Ազգային գոյութեան, ոչ-գոյութեան խնդիրը, Հայի ապագայի հարցն է»[1],- գրում էր նա:

Նա որպես օրինակ էր բերում եվրոպական ազգերին, որոնք պատերազմի ժամանակ համախմբվել էին և անհրաժեշտ էր համարում, որ հայերը նույնպես հետևեն նրանց օրինակին: «Պահպանողական, յառաջադիմական, արմատական, աշխատաւորական, սօցիալիստ, բուրժուա, պրոլետար, կղերական, ազնուական, ևն, ևն, - դրանք բոլորը՝ իրենց զատ խմբաւորումներով, իրենց առանձնայատուկ դասակարգերով, միեւնոյն ընկերութեան ծոցի մէջ ապրելով, այսօր՝ ամէնքն էլ՝ Պատմութեան հարկադրանքից մղուած, կանգնած են մարտական մի գծի վրայ. որովհետև իրենց «ազգային գոյութեան իրաւունքը, իրենց ազգի ապագան վերահաս վտանգի տակ են տեսնում»: Հետեւաբար՝ իւրաքանչիւր դասակարգ իր բաժին բազուկը, ոյժը, աշխատանքը, կեանքն է բերում այն Գործի համար, որ «ընդհանրական» է»[2]:

Ս. Սապահ-Գյուլյանը կոչ էր անում, որ հայ հասարակությունը նույնպես համախմբվի. «Զէզոք, պահպանողական, անտարբեր, ոչ-կուսակցական, արտա-կուսակցական՝ դրանք բոլորը իրական պարտականութիւն պիտի ստանձնեն՝ Կուսակցականի հետ համահաւասար: Բոլորն էլ համագործակցական կապերով իրարու մօտ պիտի գան և պայքարի գծի վրան կանգնեն, իրենց նիւթական, բարոյական բաժինը, իրենց կեանքը բերելով: - Ամէնքը մէկի համար, մէկը՝ ամէնքի: - Ժամանակը այդ է պահանջում: Հայ ազգային գոյութիւնը վտանգի տակ է. նրա ապագան խնդրոյ առարկայ է. ներկան է, որ ապագայի հիմունքները պիտի դնէ: Էլ ի՜նչ աւելի՛ մեծ, աւելի՛ բարձր, աւելի՛ հրամայական, ստիպողական ձայն կայ բոլոր հայ շրջաններին, դասակարգերին իրարու հետ կապելու և նրանցից մի ամբողջութիւն, մի միութիւն կազմելու, քան հայ ազգային գոյութիւնը փրկելու, նրա ապագան

[1] *Սապահ-Գիւլեան Ս., Ինքնավար Հայաստան, Գահիրէ, 1915, Տպ. Զ. Պէրպէրեան, էջ 89:*
[2] *Նույն տեղում, էջ 90:*

ապահովելու խնդիրը: ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ՝ - ահա՛ որպէի պահանջը»[1]:

Նա միայն գաղափարներ առաջարկող չէր, նրա անմիջական ջանքերով Ս. Դ. Հնչակյան և Սահմանադիր Ռամկավար կուսակցությունների Եգիպտոսի կառույցները որոշեցին համատեղ գործել: 1915 թ. մայիսի 20-ին Ալեքսանդրիայում նրանք ստորագրեցին համատեղ և միասնական նպատակի համար գործելու համաձայնագիր: Ըստ դրա՝

«1) Համաձայնող երկու կողմերու մօտաւոր նպատակն է ինքնավար Հայաստան եւ Կիլիկիա: 2) Ինքնավար Հայաստան եւ Կիլիկիա պիտի դրուին Երրեակ Համաձայնութեան կամ ռուսական հովանաւորութեան (protectorat) ներքեւ՝ նայելով քաղաքական յարաբերութիւններու դասաւորութեան: 3) Երկու կողմերը իրենք զիրենք բացարձակապէս հակառակ կը յայտարարեն ինքնավար Հայաստանի (Կիլիկիայով միասին) գաղափարի իրականացման՝ թրքական գերիշխանութեան (souverainete) ներքեւ: Այդ տեսակէտով անոնք կը հանդիսանան անջատականներ (separatists): 4) Այն պարագային երբ վերոյիշեալ կուսակցութեանց անջատողական բաղձանքները, հակառակ այդ սեւեռուն գաղափարով թափուած բոլոր ջանքերուն, համաեւրոպական պատերազմէն յետոյ չիրականանան, կուսակցութիւնք իրենց կը վերապահեն նոր պայմաններու համեմատ իրենց ուղղութիւնը գծել: 5) Եթէ պետութեանց փոխ-յարաբերութեանց պատճառով, ինքնավար Հայաստանը իրականանալու յաջողութեան պայմաններ ներկայացնէ՝ Ռուսաստանի հետ կցուելով - համաձայնող կողմերը այդ բանին պիտի չհակառակին: 6) Եթէ հնարաւորութիւն չլինի Հայաստան եւ Կիլիկիա միատեղ ինքնավար դարձնել՝ որպէս ամբողջութիւն եւ քաղաքական յարաբերութիւններու դասաւորութեան հիմունքով՝ հնար լինի միայն Կիլիկիան ինքնավար դարձնել, համաձայնող կողմերը, այդ պարագային այդ տեսութիւնը պիտի պաշտպանեն եւ անոր ուժ տան: 7) Ինքնավար Հայաստանի եւ Կիլիկիայի համար երկու կուսակցութիւնները կընդունին հետեւեալ ընդհանուր ծրագիրը: Ինքնավար Հայաստան եւ Կիլիկիա պիտի ունենան քաղաքական ինքնավարութիւն՝ փարլամենթական ռեժիմով եւ ռամկավարական հաստատութիւններով:

ՏԱԿՏԻԿԱ

1) Համաձայնող կողմերու ընդհանուր գործունէութեան տակտիկան պիտի լինի ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ-ԱՊՍՏԱՄԲԱԿԱՆ եւ ինչպէս նաեւ դիւանագիտական: 2) Երկու կուսակցութիւնները խորապէս համոզուած են որ Հայկական Դատին իր ընդարձակ առումով բաւարար լուծմանը համար, նպատակայարմար եւ անհրաժեշտ իսկ է ԵՐԿՈՒ ՃԱԿԱՏԻ ՎՐԱՅ ԿՌԻԻ ՄՂԵԼ, այսինք՝ ոչ միայն շեշտել ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՍԿՍՈՒԱԾ ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ եւ ուժեղացնել ու ընդարձակել զայն, այլեւ Կիլիկիոյ մէջ եւս առաջ բերել նոր ձգտումով

[1] *Սապահ-Գիւլեան Ս., նշվ. աշխ., էջ 91:*

ապստամբական շարժում: 3) Երկու կուսակցութեանց Եգիպտոսի շրջանակները իրենց աշխարհագրական դիրքին բերմամբ իրենց գործունեութեան առաջին եւ գլխաւոր թատերաբեմ կը դարձնեն Կիլիկիան եւ ամէն ջանք պիտի թափեն իրենց արեւմտեան բոլոր շրջանակներն ալ (Պուլկարիա, Ռումինիա, Եւրոպա եւ Ամերիկա) համախմբել մասնաւորապէս եւ գլխաւորապէս իրենց կիլիկեան գործունէութեան մէջ: 4) Որպէս տակտիկայի գործունէութեան միջոց՝ անոնք պարտաւոր են միասնաբար գործադրել այն բոլորը, ինչ որ ներկայ եւ ապագայ պայմանները անհրաժեշտ կը դարձնեն իրենց մօտակայ նպատակին հասնելու համար»[1]:

Ս.Դ.Հնչակեան Կուսակցութեան Եգիպտոսի շրջանի պատասխանատու Մարմնի կողմից այդ փաստաթուղթը ստորագրել էր Ս. Սապահ Գյուլյանը: Ինչպես տեսնում ենք, նա կարողացավ համագործակցություն հաստատել երկու ավանդական կուսակցությունների միջև: 1915թ. աշնանը եգիպտահայերից կամավորական ջոկատներ կազմելու նպատակով վերոնշյալ երկու կուսակցությունները կազմեցին «Զինվորական Վարիչ Մարմին», որի կազմում ընդգրկված էր նաև Ս. Սապահ-Գյուլյանը[2]: Ինչպես տեսնում ենք, նրա գաղափարներն ու առաջարկները հանգեցրին դրական արդյունքի և երկու հայ քաղաքական կառույցների միջև համատեղ գործելու առաջին քայլերը կատարվեցին: Սակայն Հ. Յ. Դաշնակցության հետ համագործակցությունը 1915 թ. իրականություն դարձնել չհաջողվեց:

1916 թ. սկզբին Ս. Սապահ-Գյուլյանը և մեկ այլ հնչակյան գործիչ՝ Ապահ Պետրոսյանը, Միջերկրականի ֆրանսիական 3-րդ նավատորմի հրամանատար փոխծովակալ Մորոյին առաջարկեցին կազմավորել հայ կամավորական կորպուս: Նրանք նախ ներկայացել էին բրիտանական հատուկ ծառայություններին և հայտնել էին, որ հանդես են գալիս Եգիպտոսի հայերի շահերի պաշտպանության կոմիտեի անունից, իսկ Հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը համամիտ է իրենց հետ: Նրանք առաջարկել էին հոգալ ծախսերի մի մասը, եթե ֆրանսիացիների կողմից մարզվող հայերից կազմավորվի կորպուս և օգտագործվի թուրքերի դեմ: Ապա փետրվարի 2-ին այդ գործիչները փորձել էին Պորտ Սայիդում հանդիպել Մորոյի հետ: Վերջինիս հրամանով նրանց ընդունել էր 3-րդ նավատորմի շտաբի պետ, նավի կապիտան Ծամոնարը: Հնչակյանների առաջարկները Մորոյին թվացել էին տարօրինակ, քանի որ ծանոթ էր այդ առթիվ Պ. Նուբարի տեսակետներին: Վերջինս այդ ժամանակաշրջանում դեմ էր հայկական զորամասի ստեղծմանը, որպեսզի հայկական նոր ջարդեր չլինեին[3]: Նա իր տեսակետն անձամբ էր հայտնել Մորոյին Փարիզում:

Մորոն հրահանգեց կապի սպա, բրիտանացի լեյտենանտ Վուլեյին, որը ֆրանսիական նավատորմին էր կցվել Եգիպտոսում բրիտանական զորքերի

---

[1] Լազեան Գ., Հայաստան եւ Հայ Դատը: Հայնռուս յարաբերութիւններու լոյսին տակ, էջ 198-202:

[2] Հովհաննիսյան Գ., Հնչակյան կուսակցության պատմություն (1887-1915թթ.), Երևան, 2012, էջ 268-269:

[3] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 107:

գլխավոր հրամանատար գեներալ Ջոն Մաքսվելի խնդրանքով, որպեսզի այդ գործիչներից պահանջի գրավոր ներկայացնել իրենց առաջարկները: Սակայն Վուլեյը, սխալ հասկանալով հրամանը, նամակով պահանջել էր ներկայացնել այդ առաջարկները ավելի հիմնավոր ձևով: Նման խճճված իրավիճակում Մորոն որոշեց սպասել այդ հարցի շուրջ Ջ. Մաքսվելի տեսակետին, անձամբ հանդիպել հայկական քաղաքական ուժերի և Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդին[1]:

Հնչակյանների կեղծիքը բացահայտելուց հետո Մորոն չափազանց բարկացել էր և նույնիսկ մտածում էր Ջ. Մաքսվելին առաջարկել, որպեսզի ընդհանրապես հրաժարվեն հայերին ռազմական գործը սովորեցնելուց, քանի որ դա միայն անախորժություններ էր ստեղծում իրենց համար[2]: Դեռևս 1915 թ. աշնանից ֆրանսիացի նավաստիները մարզում էին 250 մուսալեռցի կամավորների: Այդ գործը ստանձնել էր «Ժորեգիբերի» նավի հրամանատար Բենուա դ'Ազին, որի տեղակալ էր նշանակվել հայազգի ծովային սպա Շառլ-Տիրան Թեքեյանը[3]:

1916 թ. մարտին Եգիպտոսի բրիտանական զինվորական իշխանությունները զինել ու մարզել էին մոտ 100 մուսալեռցիների, նրանց սովորեցրել էին օգտագործել պայթուցիկ նյութեր: Որոշված էր, որ նրանք ափ էին դուրս գալու Ալեքսանդրետի շրջանում և պայթեցնելու էին Բաղդադի երկաթուղու մի շարք կամուրջներ[4]:

Սակայն Պ. Նուբարի, Եգիպտոսի թեմի առաջնորդ Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանի և այլ հայ գործիչների ջանքերով դաշնակիցները ստիպված էին հրաժարվել մուսալեռցի մարտիկներին դիվերսիոն արշավանքների ուղարկելու ծրագրերից[5]: Դա պայմանավորված էր Թուրքիայում պատանդի կարգավիճակով մնացած մի քանի հարյուր հազար հայերի կյանքը չվտանգելու մտավախությամբ:

Փաստորեն՝ անորոշ ժամանակով հետաձգվեց հայկական զորամաս ստեղծելու նախագիծը, որի ջերմեռանդ կողմնակիցներից էր Ս. Սապահ-Գյուլյանը: Հայկական զորամասի միջոցով Կիլիկիան ազատագրելու նրա ծրագրերն ու ձգտումներն իրականություն դարձնելու հնարավորություն ստեղծվեց, իսկ համագործակցության գաղափարն ավելի հրատապ դարձավ, երբ Ֆրանսիայի և Հայ ազգային պատվիրակության միջև համաձայնություն կայացվեց Կիպրոսում հայկական լեգեոն կազմավորելու շուրջ:

1916 թ. մայիսի 16-ին ստորագրված Սայքս-Պիկոյի համաձայնագրով համաշխարհային պատերազմից հետո Ֆրանսիային էին անցնելու Սիրիան, Կիլիկիան, Սեբաստիայի, Խարբերդի, Դիարբեքիրի նահանգները[6], սակայն

---

[1] *Պեյլերյան Ա., Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), հ. Ա, Երևան, 2005, էջ 252-253, 256-261:*
[2] *Նույն տեղում, էջ 257:*
[3] *Թեքեյան Շ.-Տ., Մուսա լեռան հայերի փրկությունը (Հիշողության էջեր), Երևան, 2002, էջ 51:*
[4] *Պեյլերյան Ա., նշվ. աշխ., էջ 284-285:*
[5] *Նույն տեղում, էջ 279:*
[6] *http://unispal.un.org/unispal.nsf/3d14c9e5cdaa296d85256cbf005aa3eb/232358bacbeb7b55852571100078477c?OpenDocument*

Արևելքում ֆրանսիական ուժեր գրեթե չկային, որոնք կկարողանային անհրաժեշտության դեպքում գրավել այդ տարածքները: Նման պայմաններում ֆրանսիական իշխանությունները որոշեցին օգտագործել հայ և սիրիացի կամավորներին: 1916 թ. աշնանը Ֆրանսիան որոշեց Կիպրոսում կազմավորվել Հայկական լեգեոնը: Խնդրի շուրջ համաձայնությունը կայացվեց ֆրանսիացի դիվանագետ Ժորժ Պիկոյի, բրիտանացի դիվանագետ Մարկ Սայքսի և Հայ ազգային պատվիրակության նախագահ Պ. Նուբարի միջև՝ 1916 թ. հոկտեմբերի 27-ին, Լոնդոնում: Սակայն կամավորագրությունը հաջողությամբ իրականացնելու և հայկական զորամաս կազմավորելու համար անհրաժեշտ էր հաղթահարել միջկուսակցական տարաձայնությունները և համախմբել հայության ուժերը:

Հայկական լեգեոնի ստեղծմանը Ս. Սապահ-Գյուլյանն ուրախությամբ արձագանքեց, քանզի համոզված էր, որ ինքնավարություն կամ անկախություն ձեռք բերելու համար հայերը պետք է կռվեն և ճանաչվեն պատերազմող կողմ: Դեռ 1915 թ. հրատարակած «Ինքնավար Հայաստան» գրքում նա գրում էր. «Ապագայ Խաղաղութեան Կօնգրէսին Հայ Ազգը պիտի ներկայանայ և Ինքնավար Հայաստանի, Կիլիկիայի պահանջը դնի՝ կրթնած իր անցեալ և ներկայ յեղափոխական շարժումների վրայ: Իսկ մինչ այդ՝ նա արդէն ձեռք բերած պիտի լինի պատերազմողի, մարտնչողի (belligerant) հանգամանք»[1]:

Հայկական լեգեոնի կազմավորմանը աջակցելու համար Եգիպտոսի հայկական քաղաքական, հասարակական, կրոնական բոլոր հոսանքները աննախադեպ արագությամբ միավորվեցին և ստեղծեցին Եգիպտոսի ազգային միությունը: Դրանում մեծ դեր ունեցավ Ս. Սապահ-Գյուլյանը, որը, ինչպես տեսանք, վաղուց էր արծարծել և փորձել իրականացնել հայերի համերաշխության ու միասնականության գաղափարը: Պ. Նուբարի կոչով Եգիպտոսում սկսված կամավորագրությանն աջակցելու նպատակով եգիպտահայ բոլոր կուսակցությունները, հասարակական ու կրոնական կազմակերպությունները միավորվեցին Եգիպտահայ ազգային միության մեջ՝ ցուցաբերելով միասնության և համերաշխության գեղեցիկ օրինակ: Այդ մարմնի մեջ մտան դաշնակցականները, հնչակյանները, ռամկավարները, ինչպես նաև Հայ առաքելական, կաթոլիկ, բողոքական եկեղեցիների և ՀԲԸՄ ներկայացուցիչները:

Հայկական լեգեոնի հրամանատար Լուի Ռոմիոն ռազմական նախարար գեներալ Պիեր Ռոքին ուղարկած զեկուցագրում իր զարմանքն էր հայտնում եգիպտահայերի արագ համախմբման ու միասնականության մասին: Մատնանշում էր, որ ռամկավարների ղեկավարներից Վահան Թեքեյանը և հնչակյան Ստեփան Սապահ-Գյուլյանը նախկինում ոխերիմ թշնամիներ էին, քանի որ մի ընդհարման ժամանակ հնչակյանները հանել էին Վ. Թեքեյանի մի աչքը, սակայն համազգային գործը գլուխ բերելու համար նրանք հաշտվել էին և պատրաստվում էին միասին մեկնել Ամերիկա: Իսկ

[1] *Սապահ-Գիլեան Ս., նշվ. աշխ., էջ 94-95:*

իրար ընդդիմադիր «Արև» ու «Հուսաբեր» թերթերը պարտավորվել էին կամավորագրության մասին նույնաբնույթ հոդվածներ գրել[1]:

Ս. Սապահ-Գյուլյանին մեծ հարգանքով էր վերաբերվում նաև գնդապետ Լ. Ռոմիոն: Այդ մասին Ս. Սապահ-Գյուլյանի կինը գրում է. «Միությունը մինչեւ իր կազմությունը՝ յաճախակի յուզումնալից և շատ պատասխանատու ժողովներ էր ունեցել, որին յաջող ու խաղաղ վախճանը կը պարտէին Սապահին: Իրենց հետ յարաբերութեան մէջ մտած էր Ֆրանսայի ներկայացուցիչ Գնդապետ Ռօմէօն, որ բացառիկ յարգանքով կը խօսէր ամուսնոյս հետ և երբ մի օր - երբ ամուսինս տանը մէջ կը պատրաստուէր՝ Ֆրանսա մեկնելէ առաջ, աչքէ անցնել Հնչակեան Հերոսների, Նահատակների նկարները - յանկարծ Ռօմէօ Գնդապետը Հէլիօբոլիս այցելեց մեր տունը, ու երբ այդ նկարները տեսաւ, հարցրեց թէ ո՞վքեր են այդ պատկերները, ամուսինս յուզուած պատասխանեց թէ «սրանք բոլորը թուրքերի ձեռքով նահատակուած Հայ Քաջեր են»: Ռօմէօն գոյն առաւ, գոյն տուաւ և Հայու մը չափ զգացուած՝ բառունցքը շարժեց սպառնագին ու ըսաւ … «մենք նրանց ցոյց պիտի տանք»: Ո՞վ կրնար ենթադրել թէ՝ այդ զգացումները չը պիտի յարատեւէին և իրենց խարդախ կառավարութեանց զոհ պիտի գնային Հայերը …»[2]:

Առաջին հերթին լեգեոնին կամավորագրվեցին Պորտ Սայիդում ապաստանած մուսալեռցիները, որոնց զգալի մասը, ինչպես տեսանք, նախապես ռազմական ուսուցում էր ստացել Եգիպտոսի բրիտանական ու ֆրանսիական զինվորական իշխանությունների կողմից և եգիպտահայերը: Նրանցից կազմավորվեց առաջին գումարտակը:

Ամենամեծ թվով կամավորներ սպասվում էին ԱՄՆ-ից: Արդյունավետ քարոզչություն և կամավորագրություն կազմակերպելու նպատակով անհրաժեշտ էր ԱՄՆ-ի հայկական բոլոր կառույցների սերտ համագործակցությունը: Դա բավական բարդ խնդիր էր: Նախկինում նման մի քանի փորձեր եղել էին, սակայն դրանք ձախողվել էին քաղաքական կուսակցությունների միջև եղած տարաձայնությունների պատճառով: Եգիպտոսում ազգային միությունը իրականություն դարձնելուց հետո որոշվեց Ս. Սապահ-Գյուլյանին, ռամկավար Միհրան Տամատյանին և դաշնակցական Արտաշես Հանմյանին գործուղել ԱՄՆ, որպեսզի այնտեղ աջակցեին նույնպիսի ազգային միություն ձևավորելուն և խրախուսեին կամավորագրությունը:

Տարբեր կուսակցություններ ներկայացնող երեք եգիպտահայ գործիչները 1917 թ. հունվարին մեկնեցին Փարիզ և Պ. Նուբարից տեղեկացան կամավորագրության շուրջ եղած համաձայնության պայմաններին, նրա միջոցով հանդիպեցին Ֆրանսիայի ԱԳՆ Արևելյան գործերի բաժնի վարիչ Ժան Գուի հետ, որը խոստացավ հանձնարարագրեր ուղարկել ԱՄՆ

[1] *Պեյլերյան Ա., նշվ. աշխ., էջ 410-411:*
[2] *Սապահ-Գիլենան Բ., Կենսագրութիւն Ստեփան Սապահ-Գիլենանի, Նիւ Յորք, 1936, էջ 135-136:*

դեսպանին և հյուպատոսներին, որպեսզի աջակցեն հայ գործիչներին[1]: Մ. Տամատյանին ու Ա. Հանմյանին ֆրանսիական անձնագրեր տրամադրվեցին, քանի որ թուրքահպատակներ էին, իսկ Ս. Սապահ-Գյուլյանը պարսկահպատակ էր և նրան հեշտացված կարգով ԱՄՆ մեկնելու թույլտվություն տրվեց[2]:

Չնայած նախկինում Ս. Սապահ-Գյուլյանը բավական կոշտ քննադատության էր ենթարկել Ազգային պատվիրակության նախագահին[3], սակայն դա չխանգարեց, որ Փարիզում երկու գործիչները լիովին հասկանան իրար և սերտորեն համագործակցեն:

1917 թ. փետրվարի 5-ի երեկոյան Իսպանիայի Վիկո նավահանգստից Ս. Սապահ-Գյուլյանը, Ա. Հանմյանը և Մ. Տամատյանը »Ալֆոնս XII« շոգենավով մեկնեցին Նյու Յորք, ուր հասան 16 օրից[4]:

Այստեղ նրանց դիմավորեցին հայկական չորս կուսակցությունների (ՀՅԴ, Սահմանադիր ռամկավար, ՍԴՀԿ, Վերակազմյալ հնչակյան) ներկայացուցիչները: Նրանք անմիջապես հանդիպման գնացին Նյու Յորքի ֆրանսիական հյուպատոս Լիեբերի մոտ: Վերջինս տեղեկացրեց, որ պատգամավորներին ցանկանում է տեսնել Վաշինգտոնում ֆրանսիական դեսպան Ժյուլ Ժյուսերանը: Նույն օրը նրանք մեկնեցին Վաշինգտոն, ուր հաջորդ օրը հանդիպեցին ֆրանսիական դեսպանին: Վերջինս պատգամավորներին հայտնեց, որ տեղյակ է Ֆրանսիայի ԱԳՆ-ի հետ հայերի պայմանավորվածության մասին, որ ԱՄՆ-ում կամավորներ հավաքագրեն: Բայց դեսպանը նշեց, որ ֆրանսիական բանակի համար կամավորներ հավաքագրելը տվյալ պահին սխալ քայլ է, քանի որ կարող է գրգռել ամերիկացիներին: Նա խորհուրդ տվեց դա անել խիստ գաղտնիության պայմաններում, մինչև որ ԱՄՆ-ը պատերազմ կհայտարարեր Գերմանիային, որից հետո ազատորեն կկարողանային կամավորներ հավաքել: Դեսպանը խորհուրդ տվեց որոշ ժամանակ սպասել և այդ ընթացքում մեկ մարմնի շուրջ համախմբել բոլոր հայերին: Հայ պատվիրակները թեև բավական հիասթափվեցին այդ հրահանգներից, բայց խոստացան հետևել դրանց[5]:

Եգիպտահայ պատվիրակները մեկնեցին Բոստոն, ուր հանդիպեցին ՀՅԴ, Ս.Դ. Հնչակյան, Վերակազմյալ հնչակյան, Սահմանադիր ռամկավար կուսակցությունների ԱՄՆ-ի կենտրոնական մարմինների, Հայ առաքելական ու ավետարանական հոգևոր իշխանությունների, ՀԲԸՄ-ի ներկայացուցիչների հետ և առաջարկեցին եգիպտահայերի օրինակով ստեղծել Ազգային Միություն:

---

[1] *Տամատեան Մ., Իմ յուշերէս, Պէյրութ, 1985, էջ 107-108:*
[2] *Պեյլերյան Ա., նշվ. աշխ., էջ 435:*
[3] *Սապահ-Գիւլեան Ս., Պատասխանատուները, Փրավիտէնս, 1916, Տպարան «Երիտասարդ Հայաստանի», էջ 115-125:*
[4] *Սապահ-Գիւլեան Բ., նշվ. աշխ., էջ 142:*
[5] *Տամատեան Մ., նշվ. աշխ., էջ 108-110:*

Ամերիկահայ բոլոր ուժերը խանդավառությամբ ընդունեցին Ազգային միություն կազմելու և Հայկական լեգեոնի կազմավորմանն օժանդակելու առաջարկը: 1917թ. մարտի 16-26-ը Բոստոնում տեղի ունեցավ խորհրդաժողով, ուր որոշվեցին այն սկզբունքները, որոնց շուրջ համագործակցելու էին հայկական կառույցները: Այսպիսով՝ ստեղծվեց Ամերիկայի հայ ազգային միությունը: Մարտի 26-ին կազմակերպությունները ստորագրեցին համաձայնագիր, ուր նշված էր. «Ամերիկայի Հայ Ազգ. Միութիւնը յարաբերութիւն պիտի պահէ Եգիպտոսի Հայ Ազգ. Միութեան հետ եւ իր գործունէութիւնը պիտի համաձայնեցնէ Ազգ. Պատուիրակութեան ընդհանուր ուղղութեան, կանոնաւոր յարաբերութիւն պահելով անոր հետ. միւս կողմէ՝ Միութիւնը պիտի նկատուի Ազգ. Պատուիրակութեան ներկայացուցիչ մարմինը Ամերիկայի մէջ»[1]:

Ազգային միության գործադիր մարմնի 7 անդամներից յուրաքանչյուրը ներկայացնում էր մեկ կազմակերպություն: Ատենապետ դարձավ Միհրան Սվազլյանը (Վերակազմյալ հնչակյան): Շուտով ԱՄՆ-ում ստեղծվեցին Ազգային միության 187 մասնաճյուղեր: Այդ կառույցի գլխավոր նպատակներ հռչակվեցին. «ա. Հայկական ազատագրութիւն, կիլիկեան կամաւորական ձեռնարկ, բ. Հայաստանի վերաշինութիւն եւ երկրի կարօտելոց անմիջական օգնութիւն, գ. Դիւանագիտական ձեռնարկ եւ հայանպաստ պրոպականդ»[2]:

Ազգային միությունը սկսեց հանգանակություն, իսկ 1917 թ. ապրիլին ԱՄՆ-ի պատերազմի մեջ մտնելուց հետո կամավորագրության կոչով դիմեց ամերիկահայությանը:

Կամավորների հավաքագրելու և հանգանակության համար եգիպտահայ պատվիրակները մինչև հուլիս շրջեցին ԱՄՆ-ի քաղաքներում և մեծ արդյունքներ արձանագրեցին: Մի քանի օրում ցուցակագրվեցին 5.000 երիտասարդներ[3]:

Կամավորների առաջին խումբը Ամերիկայից մեկնեց 1917 թ. հունիսի 9-ին, իսկ վերջինը՝ նոյեմբերի 3-ին[4]: Ֆրանսիացիները կարողացան միայն 1700 կամավորների ուղարկել Կիպրոս, իսկ մոտ 4000 հայեր, հոգնելով սպասելուց, 1918 թ. սկզբին կամավորագրվեցին ԱՄՆ բանակին:

ԱՄՆ-ից Ս. Սապահ-Գյուլյանը կնոջը գրում էր. «Ազգիս ցաւերը միտս ընկնելով՝ հոգի կ՚առնեմ և գրիչին կը դիմեմ և կամ՝ պարտականութեանս կը գնամ: Կեանքի յորձանքը ինձ դրել է իր ալիքների մէջ, զարկւում եմ աջ, զարկւում եմ ձախ: «Պարտականութեան զինուոր» - այս է եղել իմ կեանքս. այս հասկացողութեամբ էլ յառաջ կը գնամ մինչեւ մահ»[5]:

Ս. Սապահ-Գյուլյանը, ինչպես տեսանք, բավական նշանակալից դերակատարություն ունեցավ Եգիպտոսում և ԱՄՆ-ում հայկական

---

[1] Տամատեան Մ., նշվ. աշխ., էջ 113:
[2] Նույն տեղում, էջ 114:
[3] Գարամանուկեան Ա., Հայկական Լեգէոնը պատմական, իրաւական ու քաղաքական հարցերու լոյսին տակ եւ վաւերագրեր, Պէյրութ, 1974, էջ 74:
[4] Հակոբ Հարություն, Հայկական լեգեոն՝ հաղթական բանակ, «Ազգ» օրաթերթ, թիվ 71, 21.04.2011:
[5] Սապահ-Գիւլեան Բ., նշվ. աշխ., էջ 145:

հասարակական-քաղաքական ուժերի համախմբման և Հայկական լեգեոնի համար կամավորագրություն կազմակերպելու գործում: Նա պատերազմի սկզբից կողմ էր կամավորական շարժում կազմակերպելուն, քանի որ համոզված էր, որ ինքնավարության կամ անկախության պահանջներ ներկայացնել կարող էին միայն մարտնչող ազգերը: Նա իր գաղափարները հիմնավորելու համար տպագրեց գրքեր, հանդես եկավ մամուլում: Երբ Հայկական լեգեոնը կազմավորելու նախաձեռնությունը դրվեց սեղանին, դա նպաստավոր հանգամանքներ ստեղծեց Ս. Սապահ-Գյուլյանի գաղափարներն իրականություն դարձնելու համար: Նա անմիջական մասնակցություն ունեցավ Եգիպտոսում և ԱՄՆ-ում գործող հայկական կազմակերպությունները համախմբելու, միասնական գործունեության դաշտ բերելու դժվարին ու պատասխանատու գործը իրականացնելու հարցում:

Участие С. Сапаг-Гюляна в процессе формирования Армянского легиона
С.Погосян

Резюме

Во время Первой мировой войны С. Сапаг-Гюлян играл значительную роль по мобилизации армянских общественно-политических организаций для добровольческого движения создания Армянского легиона в Египте, и в Соединенных Штатах. Он был убежден, что только воюющие народы могут требовать автономии или независимости. Он обосновал свои идеи публикацией книг и статей. Когда инициатива создания Армянского легиона была поставлена на стол, это создало благоприятное условие для реализации идеалов С. Сапаг-Гюляна. Он имел непосредственное участие в сложном и ответственном процессе объединения армянских организаций.

S. Sapah-Gyulyan’s Participation in the Process of Formation of the Armenian Legion
S. Poghosyan

Summary

During the First World War S. Sapah-Gyulyan took significant place on mobilization of Armenian social and political organizations for voluntary movement in Egypt and USA. He was convinced that only belligerent nations could demand autonomy or independence. He substantiated his ideas publishing books and articles. When the initiative to form the Armenian Legion was put on the table, it created favorable circumstances for realization of S. Sapah-Gyulyan’s ideas. He had direct participation in difficult and responsible process of uniting the Armenian organizations.